ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎՇՏԻ ՈՂԲ-ՁՈՆԵՐԳԵՐԸ ՀԱՅ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌԱՒՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանահյուսական գիտակցությունն ու ազգային երգ-բանաստեղծությունը մշտապես ուղեկցել են պատմության շրջափուլային անցուդարձերին՝ հենվելով ավանդույթների ժառանգության վրա: Բանագիտության հիմնական խնդիրը պատմական պրոբլեմն է[1]: Դեռևս Մ. Խորենացին ժողովրդական բանահյուսությունը դիտել է իբրև սկզբնաղբյուր, «Երգարանք բանավորք»[2] ընդգծելով դրանց պատմականությունը: Անժխտելի է վիպական բանահյուսության, մասնավորապես վեպի՝ իբրև պատմական բանաստեղծության դերը հայոց հնագույն պատմության մեջ[3]: Հայ վիպական բանահյուսությունից հայտնի են ձայնարկուների ու գուսանների երգերը[4], որոնք ծագել են պատմական որոշակի անցքերի, անմիջական տպավորության տակ:

Հայ երգային բանահյուսության մեջ ազգային քաղաքական կյանքին ու իրադարձություններին (պատերազմ, սով, մահ, կոտորած, անկում և այլն) ու հերոսներին նվիրված վիպաքնարական բնույթի պատմական ողբաձոներգերը՝ անձնական ու հասարակական վշտի, պատմական հիշատակների վերապրումի յուրատիպ դրսևորումներ են: Հին և միջնադարյան ողբերը հնագույն բանահյուսական մտածողությանը բնորոշ, անձնավորմամբ հորինված պատմական վայրերի, քաղաքների, պաշտպան-հերոսների քաջության ու հայրենասիրության գովքեր են. օր. «Ողբ Եդեսիոյ».

=Ձիս ողբացեք կողկողալի,
Ես՝ Եդեսիա Ուռհայ քաղաք,
Որդեկորոյս, որբ և այրի:
= Քանզի երկիր պարարտ էի,
Աղբիւր կաթին յորդ բըղխեի,
Աւետաբեր նման վայրի:
–Բայց այսոքիւք ոչ կարացին,
Յաղթել քաջանցն, որ յիս կային[5]:

Ձոներգային բնույթի հայրենասիրական ողբերգ է «Ողբք ի մահն Ջևանշէրի մեծի իշխանին» (Դավթակ Քերթող, VII դ.)[6], որը Մ. Աբեղյանը համարում է «հնագույն չափածո բանաստեղծություն»[7]: Պարթևահասակ

---

[1] Д ж. К о к к ь я р а. История фольклористики в Европе. М., 1960, с. 20-21.
[2] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի. Պատմություն հայոց (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի) (թարգմ. ներած. և ծանոթ. Սա. Մալխասյանց). Երևան, 1968, էջ 17:*
[3] М. Э м и н. Моисей Хоренский и древний армянский эпос. М., 1881, с. 7-8.
[4] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց հին գրականության պատմություն. հ. 1, Երևան, 1944, էջ 613:*
[5] *Հայ դասական քնարերգություն (այսուհետև՝ ՀԴՔ). Երևան, 1986, էջ 246-249:*
[6] *Նույն աեղում, էջ 146-149:*
[7] *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 369:*

զորավար Ջեանշիրը «Յառներ ի քնոյ իբրև կորիւն առյուծուց»[8], որից սարսափում էին թշնամիները: Նրա եզերական մահը՝ «կականալիր ու սաստիկ գոռում-գոչումով»[9], սգում էին ողջ երկիրն ու ժողովուրդը.

– Համք թագաւորաց քև սուգ ըզգեցան[10]:
– Չի սգալի ձայնիւ անդադար ողբասցուք
Ի վերայ դժնդակ կորստեանս մերում[11]:

Նմանատիպ ժողովրդական ողբ-ձոներգերի հիմքում ընկած են անձնական ու հասարակական վիշտը՝ ցավ, ունայնություն, ափսոսանք արտահայտող ավա՜ղ, ափսո՜ս, վայ-ամա՜ն, հեյ-վա՜խ, օ՜յ, ա՜խ և այլ զգացական սկսվածքներով ու քնարական կրկնակներով, որոնք բնորոշ են նաև թաղման ծեսերին ուղեկցող դանձերգերին (–Ավա՜ղ, ափսո՜ս, կանաչ արևդ Սամէլ, ԺԸ գար)[12] ու մահերգ-ողբ-ձոներգերին (հանգուցյալի արտաքին բարեմասնությունների ու արարքների գովքը) և որոնց հնում ձայնակցում էին «բանահիւս կանայք լալականք»[13]: Ողբ-ձոներգերում արտացոլված են նախնյաց ազգային ոգու, պատմավիպական հերոսների, պատմության հերոսական էջերի փառաբանումը, գովքն ու ոգեկոչությունը (հմմտ. «Սասնա ծռեր» վեպի հերոսներին հիշատակող ու փառաբանող ողբ-բանաձևերը՝ ողորմիները)[14]: Հին հայոց մեջ նախնիների, ինչպես նաև թագավորի «Բնիկ տիրոջ» մեջ մարմնացած էր հայրենիքի (հայրեր-պապեր-նախնիք), ինչպես նաև երկրի անկախության գաղափարը: Պատահական չէ, որ հերոսական բանաստեղծության մեջ պատմական հիշատակներն ու «տիրասիրությունը» համարվել են ազգային պատվասիրություն[15] և ժողովրդի պատկերացմամբ՝ «անտոհմ մարդը» երբեք չի կարող հերոս լինել[16]: Պատմական անցքերին ու հերոսներին նվիրված ողբ-ձոներգերի հիմքում ընկած է նաև «ազգային հերոսի և հերոսականության» ժողովրդական ըմբռնումը[17], հայրենիքի համար զոհվելու, հոժարակամ նրան «մատաղ» լինելու պատրաստակամությունն ու պայքարի աննկուն ոգին, որը խիստ բնորոշ է նաև ժողովրդական վիպերգերին (հմմտ. Խորենացու հիշատակած «ամենահզոր», «ամենախոհեմ» և «բոլորից քաջ» մակդիրներով բնութագրվող Տիգրանի մասին հյուսված վիպերգերը)[18]: Պատմական զարգացման այդ նույն հերոսական ոգին է խոսում Ա՜խ Հայաստան, սիրդս ու հոկիս երգում[19], ուր հերոսը կախաղանից առաջ երանությամբ հիշում ու փառաբանում է պատմական հիշողության ու էթնիկ գիտակցության մեջ կոդավորված՝ հայոց հզոր թագավորի կերպարը.

---

[8] ՀԴՔ, էջ 148:
[9] Մ. Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի. Պատմություն Աղվանից աշխարհի. Երևան, 1969, էջ 175:
[10] ՀԴՔ, էջ 149:
[11] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 371:
[12] Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Երկեր. հ. Ի, Երևան, 1983, էջ 302–304:
[13] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 371:
[14] Սասունցի Դավիթ. Երևան, 1961, IV:
[15] Մ. Ա բ ե ղ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 209, 218, 223:
[16] Սասունցի Դավիթ, XXXV:
[17] Գ. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հին և միջնադարյան պատմա-վիպական հերոսները. Երևան, 1991, էջ 15:
[18] Խ ո ր ե ն ա ց ի, էջ 110–115:
[19] Ռ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Թալին.– Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 19, Երևան, 1999, էջ 155:

Նորեն գիկեր հայ թակավոր,
Թագն կլուխ, սուրը ձեռքին,
Զորքն էգևեն, ձայ էրդամին՝
Ակո՞ւնք ունել խա՞չ ի՞նման[20]:

Պատմական համանման իրավիճակները վերապրող, ժամանակների կապն ամրագրող ավանդակիր անհատ-հերոսների իսկական տեղը՝ ըստ Հեգելի, «ազգային պատերազմներն են»[21], ուր թրծվում է ազգային-աղատագրական պայքարի ոգին և փորձության ժամին, հանուն հայրենիքի, մահապարտ են գառնում ազգի հերոսները (հմմտ. մերօրյա արցախյան ազատամարտում՝ Վարգանանց ոգով հերոսացած Վազգեն սպարապետի և հայրենյաց կոչով՝ մահապարտ դարձած հերոսների երգումն ու երգ-կարգախոսը).

=Ուխտել ենք՝ կռվել խաչո՛վ ու սրով:
= Արծի՛վ, սլացիր Տաճկահայաստան
Կնո՞ տու հըսի էրզրում ու Վան,
Կնո՞ տու ըսը՝ օր գիկաք չուղով,
Ուխտել ենք՝ կռվել խաչո՛վ ու սրով[22]:
= Մեր եռագույնը թող միշտ չողչողա
Խնուս ու Շատախ և հողում Արցախ[23]:

Ազգային-հայրենասիրական բնույթի ողբ-ձոներգերում («Ողբ»[24], «Մայր Հայաստանը գուլար սգավոր», «Երբ որ կործանվեց չքնաղ մեծ Անին»[25] և այլն) ժողովուրդը ողբում է ոչ միայն պատմական փաստն ու իրավիճակը, ազգային վիշտն ու պատմական հայրենիքի կորուստը, այլև անսասան հավատով՝ հայահավաքի, միասնության և զենքի կոչելով (երբեմն էլ՝ բանաղրանքով) կորած լեռնաշխարհին տեր կանգնելու ուղիներ է փնտրում.

–Մշու կարիճներ լոլոր բռնվան
Զդաշտի հայեր փախթեց սև դուման[26]:
=Մեր ու մանուկ կոտորվեցին,
Վայ ամա՜ն, վայ ամա՜ն, վայ ամա՜ն[27].
=Հե՜յ վա՜խ, հեյ վա՛խ դերի Սասուն,
Ընդել էր սուգ ու վայնասուն[28]:
=Զուլում, զուլում, քաջ սասունցիք[29]:
=Տարոն-Մուշ գավառ՝ արյուն գհոսեր,
Հայրենիքը մեղ՝ զենքի գգանճեր[30]:
–Կորել է հովիվը, փռվել է հոտը,
Թուրքին է մնացել հայկական արստը:
–Որտեղ մեգ հայ կա, էկե՛ք դուրգուրենք
Մեր պապական հողին դիրություն անենք[31]:
=Ալաշկերտ, Բաղրևանդ գավառ,
Մնաս թշնամուդ՝ հոգեառ[32]:

---

[20] Նույն տեղում:
[21] Հ ե գ ե լ. Բուն էպոսի առանձին հատկանիշները.– «Խորհրդային գրականություն», 1940, N 1, էջ 163:
[22] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, Ռ. Խաչատրյանի ֆոնդ (այսուհետև՝ FRI) FRI: 3419-3420:
[23] FRI: 3419:
[24] Ա. Ղ ա զ ի յ ա ն. Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր. Երևան, 1989, էջ 87:
[25] ՀԱԲ, էջ 166:
[26] Ա. Ղ ա զ ի յ ա ն. Նշվ. աշխ., էջ 87:
[27] Կենդանի կենցաղավարող երգային բանահյուսություն (այսուհետև՝ ԿԿԵԲ):
[28] ՀԱԲ, էջ 164:
[29] Ա. Ղ ա զ ի յ ա ն. Նշվ. աշխ., էջ 98:
[30] Նույն տեղում, էջ 157:
[31] Նույն տեղում, էջ 166:
[32] Նույն տեղում:

Նմանատիպ ողբերգերում ակնառու են Մեծ եղեռնի ահասարսուռ դրվագներն ու ազատատենչ սասունցիների ինքնապաշտպանական կռիվները, արևմտահայության չմեռնող մարտական ոգին և հարատևման խորհուրդը: Հայ երգային բանահյուսության մեջ կենցաղավարող պատմահայրենասիրական նման ողբերգերի բովանդակային հենքը ազգային վշտի և հերոսական ոգու հակադրությունն ու շարունակականությունն է: Դրանք, հիմնականում, կարելի է համախմբել հետևյալ ենթախմբերում.

1. Պատմական դեմքերին, թագավորներին, զորավարներին, ազգային-քաղաքական և հոգևոր առաջնորդներին, հայդուկ-ազատամարտիկներին նվիրված ողբ-ձոներգեր, որոնք ոչ միայն հերոսների շուրջը հյուսված մահերգ-եղերերգեր են, այլև պատմափուլերն ողակող փաստավավերագրական իրողություններ, նրանց հերոսական ոգու, սխրանքների, ինչպես նաև արտաքին բարեմասնությունների դովք-փառաբանություններ: Ազգային ոգու ժամանակագրական-ժառանգական շղթայով ամրացած պատմական դեմքերի, հին ու մերօրյա հայդուկ-հերոսների շուրջը հյուսված ողբերգերում ժողովուրդը ոգեկոչման գեղարվեստական հնարանքով նրանց հետ է կապում ազգի փրկությունն ու հարատևությունը.

= Տարոն ավրվավ, Մուշ տառավ խոսլան,
– Գելիեգաղան գյուղ Հայաստանյաց սուն,
Օգոստոս՝ վառվավ, Ներսես ջան*, էռսուն հազար դուն:
– Խիրագ չմնաց, ժամիր թալնվան,
Քզի լը դարան, Ներսես ջան, մրզ ըլ ի՞նճ մնաց:
Առաջնորդարան՝ անդեր և փադուգ
Ըդ տաշտի հայեր, Ներսես ջան, գաբեր են սև սուդ[33]:
– Գելիեգուզան դուման էր,
Ամբողջ Գրլին դուման էր:
– Էլի՛, էլի՛, Գևորգ ջան,
Վե՛ր կաց գայնի՛ր, փաշա ջան,
Ձեռքդ առ սուր, հրացան,
Հայեր՝ չէրթան գերության[34]:

Ազգի փրկության գաղափարը կրող և ժողովրդի սերը վայելող առաջնորդների, հայդուկ-հերոսների մահը դառնում է համազգային սուգ և անմահության կոչնակ: Բանաստեղծական կատարյալ պատկեր է Սուլուխի կռվում «Սասնա սարերի ասլան» Գևորգ Չտուչի մահվան ու հրաժեշտի պատկերը, ուր ազգային հերոսի կորստյան ցավն են ապրում ոչ միայն ժողովուրդը, այլև ողջ Մշո դաշտն ու Սասուն լեռնաշխարհը.

– Զարդվել է Գևորգ, սարերի ասլան,
Յուր զենքին նայեց, մեգ ալ յուր արյան:
= Լուսին բարձրացավ գեպ երկնի կամար.
Մշու դաշտ տխու՜ր, տրտում կէրևար,
Մեռնի՛մ քեզ, լուսի՛ն, քու հարգ՝ պատվական,
Ֆոֆոքար Սասուն, Տարոն սիրական,
Սաչքի դուրանի ընկած քաջերից՝
Սիրո ողջույն տար Անդրանիկ փաշին[35]:

---

* Մշո թեմի առաջնորդ՝ Ներսես Ղարախանյանի մասին է:
[33] ՀԱԲ, էջ 156-157:
[34] Նույն տեղում, էջ 161:
* Այլ տարբերակում՝ Գոհար:
[35] ՀԱԲ, էջ 159:

Դիմառնությամբ ու ոգեկոչությամբ են բանահյուսվել նաև արցախյան ազատամարտում զոհված հերոս-ազատամարտիկներին նվիրված ողբերգերը (Շահեն Մեղրյանց, Վահե Բաղդասարյան, Պեսո, Թաթուլ Կրպեյան, Բեկոր, Կարոտ, Ահարոն և այլոք), հերոսներ, որոնք զենքի հետ, իրենց հոգում, մշտապես կրում էին գարավոր թշնամու (թուրք-ըսկըրի) դաժան կերպարը՝ վերապրելով Եղեռնի դժոխային դրվագները.

– Շահբուլաղ գյուղը դարձավ Նոր Սուլուխ
Պայթեց նոր գնդակ, ինչպես հրաբուխ:
= Դե ոտքի ելեք, ո՛վ հայոց քաջե՛ր,
Ըսկըր չբրձի մըր սուրպ էրգրեն,
Թող ցեղերն այդ պիղծ ու թափառական,
Քո ահից թողնեն հո՛ղը հայկական:
= Ա՜խ, ինչո՞ւ ընկար և ո՞ւմ գնդակից,
Վե՛ր կաց, Ահարո՛ն. վե՛ր կաց խոր քնից[36]:
– Մռավ լեռան լանջին սև ամպեր կապեց.
Արցախ գավառ յուր որդիներին կանչեց[37]:
– Փարվեցավ կռվում, Շահեն Մեղրյանց.
Մռովի լանջին, անվեհեր հսկան,
Սրբությամբ պահեց հայկյան անունը,
Թափեց իր վերջին կաթիլ արյունը[38]:
– Երեք ձիավոր դարձան ուխտավոր,
Արցախ աշխարհի սուդն էր ահավոր[39]:
= Ե՛լ, Անդրանի՛կ, հեծի՛ր քո ձին,
Քեզ է սպասում ղարաբաղցին[40]:

Պատմական տարբեր ժամանակահատվածներում, տարբեր դրվագներում ոգեղենի խաչմերուկում, կարծես, հանդիպում են հին ու նոր հերոսները, պատմական ժամանակը դառնում է ներկա: Նույնատիպ ողբեր են հյուսվում արցախյան ազատամարտի օրերին.

– Սև ամպերը հայոց երկինք պատեցին
Պայծառ արևն ու լուսինը ծածկեցին[41]:
– Ոչ ինչք մնաց, ոչ ապաստան, ոչ պաշտպան,
Նստել անտեր արյուն գուլա Հայաստան[42]:

Եվ մի վերջին անգամ հայը համոզվեց, որ լացով ու ողբով չի կարող փրկել Հայաստանը, և ի վերջո, վշտի մոտիվը տեղի է տալիս մարտակոչի (հմմտ. «Մգրոյի մահը»)[43]:

= Օվ իր ազգի դեմ զոհվի = Պետք է կռվել կամ չքանալ հավիտյան[45]:
Արժանի՛ է մեծ փառքի[44]:

---

[36] FRI: 3399-3401:
[37] FRI: 3403:
[38] FRI: 3383:
[39] ԿԿԵԲ (Երգը գրառել և երգել է ազատամարտիկ Վրեժ Սուքիասյանը մարտադաշտում, վիրավորվել է 1994 թ. Ստեփանակերտում):
[40] FRI: 2901:
[41] FRI: 2913-2914:
[42] FRI: 2913:
[43] ՀԱԲ, էջ 156:
[44] Նույն տեղում:
[45] FRI: 2913:

2. Պատմական վայրերին, գավառներին, քաղաքներին ու գյուղերին նվիրված ողբերգեր, որոնց թեմատիկ-գաղափարական հենքն ազատագրական պայքարում համընդհանուր վիշտն է («Գելիեգազանի կործանումը», «Ադանայի ողբը»)[46], պատմական փառավոր անցյալի հիշատակությունն ու ոգեկոչությունը: Համեմատենք՝ ուշմիջնադարյան մատենագրության մեջ՝ «Ողբ ի վերայ Հայաստան աշխարհի» (Ղազար Ջահկեցի XVII-XVIII դդ.)[47]:

= Ո՞ւր են նախկին հարքն ամենայն:
= Ո՞ւր են գաւառքն մեր հայրենի[48]:

Անցյալի պատմական արժեքների ու ազգային հերոսների կորուստը հիշատակող նմանատիպ ողբերգերում հարց-հորդոր-հրաման-ցասում արտահայտող դիմումային հռետորական բնույթի ավանդական կայուն ձևերը (ո՞ւր են, հիշենք, խոսենք և այլն) հնչում են իբրև նախատինք ու սթափեցնող մարտահրավեր (հմմտ. Մ.Խորենացու «Ողբ»-ում. = Ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը...*)[49]: Հարցումային նման կայուն ձևերն ու կրկնակ-բանատողերը պահպանվել են արդի երգային բանահյուսության մեջ (օր.՝* Ո՞ւր են, Ա՜խ Ամբերդն ու Արխաշանը, Ա՜խ Ալագյազ *և այլն)[50], որոնք հայրենասիրական մոտիվներով բանահյուսված պատմական փառավոր անցյալի, ազգի նվիրյալ հերոսների, ազգային արժանապատվության և ինքնագիտակցության վերզարթոնքի ոգեկոչման ուղեցույցներ են (հմմտ. Մուշեղ Մամիկոնյան իդեալ-հերոսի կերպարը հայոց վիպական բանահյուսության, ավանդական վեպի մեջ [«Պարսից պատերազմ»], որն ապրում էր ոչ միայն իր «տիրոջ և աշխարհի համար», այլև թույլ չէր տալիս* «անգամ մի կորու չափ գետին Հայոց երկրից վտարել, օտարել»*)[51]:*

= Հեյ, ժողովուրդ հիշե՛նք.
Մեր քաջերին հիշե՛նք.
Հիշենք Մուշեղ զորավարին
Հայ ազգության մեծ պաշտպանին
Մամիկոնյան քաջ Վարդանանց
Սոցա գերեզմաններն հիշենք[52]:
= Ո՞ւր են քաջերդ Ալագյազ:
= Ո՞ւր է արծիվդ Ալագյազ[53]:
=Ա՜խ Ամբերդն ու Արխաշանը.
Մեծ բերդն է քու նշանը,
Տիրում էր Սմբատ իշխանը,
Ո՞ւր են հայերդ, Ալագյազ[51]:

Խոսե՛ք Արտաշատ ու Դվին.
Արքա-հզորներդ ո՞ւր են.
Ձեր անմատչելի քաղաքների
Արթուն դռնապաններն ո՞ւր են[55]:
= Սարի ասլա՛ն, սիրու՛ն Գևորգ,
Ո՞ւր է չկա քաջ ֆիդայը.
Ո՞ւր է չկա քաջ Հրայրը.
Սեբաստացի քաջ Մուրադը,
Տարոնի առյուծ Սմբատը,
Սպաղանաց քաջ Մակարը[56]:

---

46 ԿԿԵԲ:

47 *Ա. Այվազյան. Ղազար Ջահկեցու գաղափարախոսությունը.– «Պատմա-բանասիրական հանդես». 2002, №1, էջ 141-154:*

48 *Նույն տեղում, էջ 149:*

49 *Խորենացի. էջ 317:*

50 *ՀԱԲ, էջ 166-167:*

51 *Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 224:*

52 *ՀԱԲ, էջ 167:*

53 *Նույն տեղում:*

54 *Նույն տեղում:*

55 *Նույն տեղում:*

56 *FRI: 3317:*

Դիմառնության գեղարվեստական հնարանքով հորինված պատմական հերոսներին ու արժեքները հիշատակող կարոտաբաղձ այս բանատողերը մեզ կրկին հիշեցնում են միջնադարյան ողբ-ձոներգերը.

– Արևելյան քաղաքդ Անի...
Քանզի երբեմն և դու էիր՝
Վայելչական հարսն ի քոջի.
Մերձաւորաց յոյժ ցանկալի.
Հեռաւորաց փափագելի[57]*:*

Ժողովրդական բանահյուսության մեջ հայոց վեհաշուք մայրաքաղաք Անիին նվիրված ողբերգի տարբերակները («Ողբ Ապովյան»[58]*, «Ողբ Անիի»*[59]*, «Ա՜խ Անի»*[60]*, «Անի»*[61] *և այլն) հանգիպում են վշտի, կորստյան ցավի, կարոտի ու հայրենաբաղձության մոտիվներով, որոնց բանատողերն ավարտվում են ճակատագրի ու նենգ թշնամու գեմ ըմբոստությամբ ու բանագրանքով.*

= Նման ես ջրում ջախջախված նավի.
Դեսնողը չի՛ օգնի, միայն ղյավի,
Մնացել ես գլխաքանգ, ավեր, Անի՛, ա՜խ Անի:
= Անի՛, Անի՛ անբախտ Անի, ա՜խ Անի՛,
Մեգ լացողը քեզ ինչ անի, ա՜խ Անի[62]*:*
= Անի՛, Անի՛, ա՜խ Անի,
Քանգողի տունը քանգվի[63]*:*

Հայ երգային բանահյուսության մեջ հերոսներին ու պատմական վայրերին նվիրված վիպաքնարական ողբ-ձոներգերը գալիս են դարերի խորքից, հետևանք են պատմական որոշակի իրավիճակների ու շրջադարձերի (ազգային ազատագրական պայքար, Մեծ եղեռն, արցախյան գոյամարտ) և ունեն պատմավավերագրական, էթնիկ-հոգեբանական որոշակի արժեք՝ արտացոլելով ոչ միայն ազգային հերոսների, կորուսյալ բնօրրանի ողբն ու հասարակական վիշը, այլև ազգային հերոսական ոգու, պատմական հիշատակների երբեմնի փառքն ու վերարժեքավորումը, պատմական հայրենիքը վերագտնելու, ազատագրելու իղձն ու արգար պահանջը:

---

[57] ՀԴՔ, էջ 244:
[58] Գ. Սրվանձտյան ց. Երկեր. հ. I, Երևան, 1978, էջ 268:
[59] ԿԿԵԲ:
[60] ԿԿԵԲ:
[61] ՀԱԲ, հ. 19, էջ 166:
[62] Նույն տեղում:
[63] Գ. Սրվանձտյան ց. Նշվ. աշխ., էջ 268: ԿԿԵԲ:

НАЦИОНАЛЬНО-ПАТРИОТИЧЕСКИЕ И ОБЩЕСТВЕННЫЕ ПЛАЧИ-ПОСВЯЩЕНИЯ В АРМЯНСКОМ ПЕСЕННОМ ФОЛЬКЛОРЕ

РАИСА ХАЧАТРЯН

Резюме

Лирико-этнические плачи-посвящения и скорбные песни в память о героях и исторических местах восходят к древнейшим временам, они являются порождением определенных исторических ситуаций и событий (национально-освободительная борьба, геноцид, арцахское противостояние) и имеют историко-документальное, этнопсихологическое значение, отражая не только общественную скорбь и плач по национальным героям и утраченной родине, но и былую славу и переосмысление героического духа и исторической памяти, справедливые чаяния народа вновь обрести, освободить историческую родину.

NATIONAL-PATRIOTIC AND PUBLIC LAMENTATIONS-DEDICATIONS IN THE ARMENIAN SONG FOLK-LORE

RAISA KHACHATRYAN

Summary

Lyrical-ethnical mournful songs and lamentations dedicated to historical sites and heroes go back to the most ancient times, they are a product of definite historical situations and events (national-liberation struggle, the Genocide, the Artsakh stand) and have historical-documentary and ethno-psychological significance. They reflect the public sorrow and lamentations for national heroes and the lost homeland, as well as the past glory and reconsideration of the heroic spirit and historical memory, the just aspiration to regain and liberate the historical fatherland.